

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелкъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անհատականութիւնը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի հայ-կաթողիկոսներ. Ներքին լուսինք. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լէօպոլդ Բանկէ. Արտաքին լուսինք. — ԵԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՅԻՐ. — ՊԱՏԱՄԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եզրագրողներ, գեր. Ազատական և Մեխիթարեաններ.

ՄԵՐ ԱՆՀԱՍՈՒՆՈՒԹԻՒՆ

Հայը դեռ չէ ըմբռնում լրագրութեան բարձր նշանակութիւնը, նա դեռ ևս չէ հասկանում մամուլի անհրաժեշտութիւնը: Հայերի մի մաս, նրանք, որոնք արհամարհում են իրանց մայրենի լեզուն, նախաձեռնում են հայոց մամուլի, որպէս խաղաղիքի վրա, նայում են լրագրի վրա ինչպէս խաղաղիքի անձնական կապիկի ծնված ապագայի մի գործի վրա: Ամբողջ մեծամասնութիւնը անտարբեր է դէպի իր մայրենի լեզուն: Հրատարակող մամուլը, որովհետեւ առհասարակ անտարբեր է դէպի որ և է մտաւոր կեանքը:

Մեզնիք մեր ինտելիգենցիան և մեր միջին դասակարգը: Սրանք թէև հետաքրքրվում են մամուլով, բայց սրանց հայացքն էլ մամուլի կոչման վրա դեռ ևս շատ միակողմանի է:

Մեր հասարակութեան միջին դասակարգը և մեր ինտելիգենցիան, մի խօսքով մեր լրագրողները. ընթերցող դասը, նայում է հայոց լրագրի վրա, ինչպէս մի թերթի վրա, որ անպատճառ, և իր գոյութեան ամբողջ ընթացքում պէտք է հաղորդէ արտաքին կարգի տեղեկութիւններ, սպասում է լրագրից անպատճառ մեծ մեծ բաների, սպասում է թերթից արտասովոր լուսինքի, պահանջում է մամուլից անհասկանալի բաների...

Այդ սխալ համոզմունքի պատճառն ինչ է. պատմութեան այն է, որ հայ ընթերցողը դեռ չէ ըմբռնել որ լրագիրը պէտք է զբաղվի օրական հարցերով և երբ կեանքի մէջ չը կան արտակարգ անցքեր, արտասովոր, կարգից ու սովորականից դուրս երեւոյթներ, — լրագիրն էլ պէտք է դիտէ սո-

վորական, առօրեայ կեանքի երեւոյթներ, պէտք է խօսէ հասարակական սովորական անցքերի մասին ու նրանց քննադատէ:

Իսկ հայը, որ առհասարակ անընդունակ է դիտել, սովոր չէ խոր կերպով թափանցել օրական, սովորական, առօրեայ հարցերի մէջ, — անմիջապէս սառչում է դէպի թերթը, երբ սա մտնում առօրեայ կեանքի երեւոյթներին քննադատութեան սովորական շաւղի մէջ: Հայը պահանջում է միշտ և անդադար արտակարգ երեւոյթներ, իսկ հասարակ, ամենօրեայ կեանքի երեւոյթներ չեն շարժում նրա հետաքրքրութիւնը: Ինչպէս հայը անտարբեր է դէպի ամենօրեայ, սովորական երեւոյթները իր հասարակական և ընտանեկան ներքին, մասնաւոր կեանքում, այնպէս էլ նա անտարբեր է և դէպի նոյն երեւոյթներին քննադատութիւնը լրագրութեան մէջ:

Կա առհասարակ մի ազգի բարոյական և մտաւոր անհասունութեան, ահաստեղծեան ապացոյց է, երբ մի ազգ նայում է իր մամուլի վրա ոչ թէ որպէս իր սովորական կեանքի առօրեայ կարիքներին դարձան տուող, ամենօրեայ երեւոյթներ քննադատող, սովորական կեանքի մէջ յարուցող հարցերին ուղղութիւն տուող, առաջնորդող մի բարոյական և մտաւոր ոյժի վրա, — այլ արտասովոր, արտակարգ հարցերը յարուցանող, ազմուկ հանող, ոգևորող ջերմ զրգուղ ընթերցանութեան վրա...

Ի հարկէ, երբ լինում են արտակարգ երեւոյթներ, մամուլը նրանց մասին էլ պէտք է խօսի, պէտք է այդ հարցերին էլ ազնիւ և անկեղծ կերպով ուղղութիւն տայ և առաջնորդի: Հասարակայն կարծիքը, բայց մի՞թէ մեր հասարակութիւնը մինչև այժմ այն աստիճան անզարգացած ու միամիտ է որ կարծում է թէ իրան մամուլից է կախված հնարի, ստեղծելի, արուեստական կերպով լոյս հանել մեծ մեծ հարցեր, արտասովոր անցքեր, արտակարգ երեւոյթներ:

Բայց իսկապէս հայը այնքան անկիրթ է, այն աստիճան անզարգացած է, այնքան քիչ հասարակական մտաւոր հասունութիւն ունի, որ իրաւ կարծում է թէ թերթի խմբագրիցն է կախված ստեղծել մեծ մեծ հարցեր, երբ նրանք չը կան կեանքի

մէջ: Հայը այն աստիճան միամիտ է, կամ իրան միամիտ է ձևացնում, որ կարծում է թէ խմբագիրը ամենակարող է, թէ նա իր կողմից կարող է այս կամ այն հարցի վրա գրել և միշտ զարմանում է ինչի այս ինչ յօդուածը թերթի մէջ չը տպւեցաւ, ինչի այն ինչ խնդիրը լրագրի մէջ չէ յարուցվում, ինչի խմբագիրը չէ գրում այն ինչ հարցի մասին:

Ճշմարիտ է լինում են լրագրողներ, երբ սովորականից դուրս, արտաքին կարգի նշանաւոր հարցեր են ծնվում այս կամ այն հասարակութեան մէջ, — և մամուլն էլ խօսում է այդ հարցերի մասին իր ժամանակին: Այնուհետև մեծ հարցեր, որոնք ժամանակաւորապէս են յարուցվել, շատ անգամ փոխարինելի պէս անցնում են և մարդկային հասարակութիւնը նորից մտնում է իր սովորական կեանքի խաղաղ ընթացքի մէջ:

Եւ այդ տեսակ ժամանակն է երևում թէ որքան քաղաքակիրթ է կամ անկիրթ է հասարակութիւնը, որքան մտաւորապէս և բարոյապէս հասունացած է կամ տհաս է հասարակութիւնը: Հասունացած և քաղաքակիրթ հասարակութիւնը անմիջապէս սկսում է հետաքրքրվել ամենօրեայ, սովորական կեանքով, առօրեայ ներքին հարցերով: Իսկ տհաս հասարակութիւնը այլ ևս չէ հետաքրքրվում լրագրութեամբ և անդադար կրկնում է թէ «այսօր լրագիրներն մէջ ոչինչ հետաքրքրի բան չը կայ», դատարար է կարգաւ անգամ, քանի որ բարոյապէս և մտաւորապէս տհաս հասարակութեան համար ուղեղի մեծ աշխատանք, մտաւոր մեծ ջանքեր հարկաւոր է անել հետաքրքրվելու իր առօրեայ կեանքի լուր կամ վատ, գեղեցիկ կամ տգեղ երեւոյթներով... Տհաս գլխի համար որ սովոր չէ ուղեղով կանոնաւոր կերպով բանելու, կեանքի ամենօրեայ ամենամանրագէտ կարիքներն ըմբռնելու, ընթերցանութեամբ հետաքրքրվելու համար, — անպատճառ հարկաւոր են մեծ մեծ հարցեր, աղմուկ զրոյց երեւոյթներ, արտաքին կարգի հասարակական կամ քաղաքական անցքեր: Իսկ հասարակ, ամենօրեայ, առողջ հարցեր նա չէ ըմբռնում, քանի որ չեն հետաքրքրում նրան:

Նրբոր մարդու ստամոքսը թոյլ ու հիւսնադու է, նա չէ կարող մարտիկ հասարակ, անդադար, առողջ կերակուրներ, այլ այդ տեսակ ստամոքսի համար սովորական կերակուրը մարտիկ համար, — անպատճառ հարկաւոր են զրգուղ և տաքացնող միջոցներ, հարկաւոր է պղպեղ, խաղաղ, օղի և այլ զօրեղ միջոցներ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐ

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում զանազան ազգութիւնների հետ, նաև բնակվում են բազմաթիւ հայ-կաթողիկոսներ: Դրանք գրեթէ բոլորն էլ գաղթած են այստեղ Հայաստանից և Թիֆլիսի խորքերից, օրինակ Էրզրումից, Փարսիքից, Բաղդադից, Հալեպից, Մուսուլից և այլն: Դրանց ստուգար մասը խմբված է Թիֆլիսի Սոյոքայի կողմից թաղում և կազմում են իբրև մի համայնք: Ամեն դէպքում միմեանք օգնում են, թէ ուղևորութիւն պատահելու, թէ դժբաղդութիւն, ու թշուառութիւն: Օրինակ, եթէ մէկը աղջիկ ունի մարդու տալու և կարողութիւն չունի, իսկոյն և եթ նրան օգնում են ամեն կողմով մի և նոյնը անում են եթէ մի չքաւոր տան մէջ մէկը մտնում է, կամ եթէ մի ընտանիք չքաւորութեան մէջ է գտնվում: Մուսուլից ասած բանը նրանք չը գիտեն: Խիստ կրօնասէր են, թէ մեծը, թէ փոքրը և երեք եկեղեցուց յետ չեն մնայ թէև այդտեղ արարողութիւնները կատարվում են իրանց անհասկանալի կաթողիկոսի լեզուով: ամեն կերակի օրերը դրանց եկեղեցում ասեղ գցելու տեղ չէ լինում: Բացի դրանից նրանք տան մէջ էլ օրական երեք անգամ թէ մեծը և թէ փոքրը պարապում են երկար աղօթքներով: — մէկ երբ որ առաւօտեան վաղ նրանց եկեղեցու զանգակը հնչում է երեք անգամ, մէկ կէսօրին, մէկ էլ երեկոյան: Օրական երեք անգամ հնչում է Թիֆլիսի կաթողիկ եկեղեցու զանգակը, որի ձայնը լսելուն պէս տան մէջ բոլոր գտնվողները մի մի փոքրիկ աղօթք գիրք առած, չորում են և սկսում երկար աղօթել:

Բ.

Յայտնի է, որ Հոռոմայ Աթոռը սկզբից ի վեր մեծ ջանքեր է արել Հայաստանում կաթողիկոսութիւնը տարածելու համար, որին վկայ են հուշակաւոր Ֆիորենցայի տեղեկական ժողովից (1439) մինչև վերջին վատիկանոս սինոդոսը (1869) պատահած դէպքերը. դեռ թողնում ենք այդ ժամանակամիջոցից առաջ եղած ջանքերը, որոնք նուազ նշանաւոր տեղ չեն բռնում մեր պատմութեան մէջ: Եւ պարզօրէն խօսելով, Հոռոմայ այդ ջանքերն և նպատակները եթէ ըստ չափու մտադրութեան չէ յաջողած, սակայն բոլորովին անյաջող էլ չէ եղած, շնորհիւ Հայաստանից եկեղեցուց հոգևոր վարչութեան թուղութեան և այլ նպատաւոր հանգամանաց, զիստաւարաբար այդ մի և նոյն եղբայրների ձեռքով: որոնց դէմ մաքառելու և նոյն պատմագրու գործունէութեան առաջն առնելու համար զարմանալի է, որ Լիւթիանը կամ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանը դեռ չէ կարողացել աղօղ և ստիպողական միջոցներ ձեռք առնել ի նկատի ունենալով եղբայրական կարգի ընդհա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԶՈՒՏՆԵՐ, ԳԵՐ. ԱԶԱՐԵԱՆ ԵՒ ՄԵԽԻՏԱՐԵԱՆՆԵՐ

Ա.

Թէ ազգային և թէ օտար լրագիրներում մի բանի ժամանակից ի վեր, քննադատութեան առարկայ է դարձել Եւրոպայի մեծ մասից արտաքին ված եղբայր կրօնի միաբանների փոքր-Ասիա և Հայաստան տարածվել և նոյն պոստիկ կատարած գործերը: Ի հարկէ ամեն լրագիր իր գոյնին և իր ուղղութեան համեմատ է դատում այդ խնդիրը, որով և հետևանքներն մերթ միմիկարիչ են դուրս գալիս և մերթ դառնալով: Ինչդէ մէջ մի էական կէտ էլ կայ, որ է այն աշակցութիւնը, որ չնորհվում է Տաճկաստանի հայ-կաթողիկոսի կաթողիկոս և պատրիարք գեր. Ստեփան Պետրոս Ժ. (Ազարեան) եղբայրների տարածման փոքր-Ասիայում Այս տարուայ «Արձագանքը» մարտի համարներից մինում մի փոքր յօդուած էր հրատարակւած այս մասին, որի մէջ խափառ դատապարտվում էր Սաքըր-Ազաճի (Կ. Պոլսոյ հայ-կաթողիկոս) պատրիարքարանը: Մենք այդ յօդուածում յայտնում և մտքերը ընդհանրապէս շատ իրաւացի ենք գտնում: Բայց ինչքան որ իրաւացի լինին այդ մասին եղած քննադատութիւնը — այսու ամենայնիւ, համարենք — թէ գեր. Ազարեան ինքն

է հրաւիրում և ինքն է յատկապէս ինքնաբերաբար աշխատում տարածելու եղբայրներին Հայաստանում — ճշմարիտ չէ, կամ գոնէ չափազանցած է: Եթէ չեն ստում մեր հաւաքած տեղեկութիւնները, այդ խնդրում էական գեր խաղաղողներն են Հոռոմայ Պապը և օսմանեան կառավարութիւնը: Հոռոմայ նշանաւոր «Տարածման Հաւատոյ» ս. Ժողովը, որ առհասարակ ծանօթ է պրօպագանդա և կոչման ներքե, պաշտօն ունի աշխատել ամենայն կերպիւ տարածել կաթողիկոսութիւնը: Արեւելում: Պրօպագանդայի հոգևորականութեան ներքե են բոլոր այն միսիոնարական ընկերութիւնները, որոնք գործել են և գործում են Ասիայում, կամ այլ տեղերում Եւրոպայից դուրս: Ըստ այսմ և եղբայրները՝ որոնց այս մասին ճարտարկութեան, խորամանկութեան, յաջողութեան և միանգամայն դիտութեան ոչ մի կրօնաւորական կարգ չէ հաւաստում, իրանց նոր ձեռնարկութեան մէջ Հոռոմայ պրօպագանդայի առաջնորդութեան ներքե են: Իսկ այն կաթողիկ պետութիւնները, որոնք իրանց երկրում եղբայրների գործունէութիւնը միասակար համարելով արտաքին են նոյն պրօպագանդա են այդ մի և նոյն անձանց, երբ սրբա մի այլ հողի, այլ ասպարիզի վրա են գործում: Միւս կողմից օսմանեան պետութիւնը տեսնելով որ զանազան կրօնաւորներ Եւրոպայից և Ամերիկայից իր առանց այն էլ դատարկ զանաքարներն դիւ չափ չը մօտեցած, քանի են անում զարդանք, որբանոցներ և այլ հասարակական հիմնարկութիւններ, տարածում են ուսումը ընդհանուր Ժողովրդեան, նա բնաւ չէ ընդգրկում այդ տարածման դէմ, նամանաւոր

Կրանք ժիր աշխատանք են, առատաճան են և լարին են: Բայց ցատկուն այն է, որ հենց դրանով են սահմանափակվում դրանց լուս յատկութիւնները, իսկ աւելի անհրաժեշտ և պիտանի գործերում թիֆլիսի հայ-կաթօլիկները թոյլ են, տղէտ են և անուշադիր են և զրա զլիւսուոր պատճառները ներկայանում են լատին կղերականները: Այդ կղերականների պատճառով թիֆլիսի հայ-կաթօլիկները չը գիտեն ինչ բան է աղլը, չեն գնահատում մայրենի լեզուն և մինչև անդամ հրաժարվում են իրանց հայ ճանաչելուց: Լատին կղերականները գրանց խիստ արգելում են թատրոնական ներկայացումներ ացելիլ, լրագիր կամ վիպական գրութներ կարգալ, և հայ-լուսաւորչականների հետ բարեկամութիւն, խնամութիւն տանել խիստ են արգելում:

Արիւ էր այն ժամանակը, երբ թիֆլիսի հայ-կաթօլիկներին ղեկավարում էին Վենեցիայի Միսիթարեան միաբնակութիւնից եկած հայ-կաթօլիկ քահանաները, բայց հետզհետէ վերջիններս գրեթէ կուլ գնացին լատին եկեղեցու մէջ: Վենեցիայի միաբնակութիւնից այժմ թիֆլիսում կան միայն երկու քահանաներ մէկը կուկիայի եկեղեցում, իսկ միւսը Միսիթարեան եկեղեցում: առաջինին վիճակված է միայն հիւանդանոցների հիւանդներին հաղորդել և այնտեղ մեռնողներին թաղել, իսկ վերջինին ոչ ծովա են տալիս, ոչ քահանայական պաշտօն: Այս վերջինս հայր Համաղասայ Սափարեանցն է, որը շատ անգամ ուղւում էր Եւրոպիան դպրանոցում դաստաւութեամբ պարաւել, բայց ամեն անգամ մերժումն էր ստանում իր իշխանութիւնից, իսկ այժմ գրեթէ անգործ է և իր հայրութեան պաշտպան լինելու համար բոլորովին ընկած է լատինականների աչքից:

Մինչև վերջին տարիներս թիֆլիսի հայ-կաթօլիկներին եկեղեցու գաւթում կար մի ծխական դպրոց, որտեղ երկու տեղի մանուկներին միասին սովորեցնում էին Վենեցիայի Միսիթարեան միաբնակութիւնից եկած հայ-կաթօլիկ քահանաները թէ մի քանի դպրոցական տաւրականեր և թէ մայրենի լեզուն: Այդ տեղից մանուկներին ուղարկում էին Վենեցիայի սր. Ղազարոսի Վանքը և այնտեղից դալիս էին արդէն լուս պատրաստված քահանաներ: Հետզհետէ եկեղեցու կողքում շինեցին մի մեծ շինութիւն և այնտեղ օրիորդներին տեղաւորեցին վերին յարկում, իսկ աղաներին ստորին յարկում և նրանց մէջ ծաւալում էին կրթութիւնը, գլխաւորապէս մայրենի լեզուն: Բայց երբ որ թիֆլիսի հայ-կաթօլիկների մէջ մեծ կշիռ ունեցող հայր Զաքարիա Գուրգէնեանց տեղափոխելը Էրիւն, և նրա տեղը եկաւ մի լատին պատէր, որը ծագումով հայ է, ուսումնարանի օրիորդաց բաժինը փակել տուեց, աղաներին թիւը քաջրեց և քայի դրանից նրանց մայրենի հայ լեզուն բոլորովին արտաքսեց այդ դպրոցից:

Մանուկներին խիստ կերպով արգելում է մինչև անգամ հայերեն մի բառ արտասանելը, այլ ստի-

պում է միայն վրացերէն խօսել, իսկ այդտեղ դաստաւ վրացի ուսուցիչը խիստ պատժի է հենթարկում այն մանուկին, որը յանդգնում է իրան հայ անուանել, այլ ոչ թէ վրացի:

Նոյնոքները, որոնք պատասխանատու են այս բոլորի վրա հետեւանքներին, բոլորովին անտարբեր են այս գործում: Կրանք չը գիտեն, ինչ է աղգութիւնը, ինչ է մայրենի լեզուն, ինչ է հայ բառը: Կրանքից շատերին թէք պատահէր մի տեղ ու հարցնէր՝ «Ինչ աղգին ես պատկանում», —մնում են շուարված մոլորված, չը գիտեն ինչ պատասխանեն, մի և նոյն մարդը մի անգամ կասէ ձեզ՝ «ես ֆրանց եմ», մի այլ անգամ «վրացի եմ»: Եւ ճշմարիտ նախքն չը գիտէ ինչ է, որովհետեւ ոչ մի աղգութեան չէ պատկանում: Կրօնը կուլ է տուել թիֆլիսի հայ-կաթօլիկներին մէջ ցրդական, անգագրական, աղգագրական և աղգային գաղափարը:

Ս. Ն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնական «Кавказ» լրագիրը յայտնում է, որ Թաքաւոր Կայսրը բարեհաճել է հրամայել, որ թիֆլիսի ուսումնարան Սեմյարայի թէկտօրին սպանող լազիկային դատել զինուորական դատարանով: դործադրելով պատերազմական ժամանակի օրէնքները:

Օդեսայի լրագիրները հաղորդում են, որ աչքի առաջ ունենալով Կալուսթայում խօսքայի երեւոյթ, Օդեսայի ժամանակաւոր գեներալ-հահանդապետը անհրաժեշտ է համարել երկարիկ կարամոնիին Հնդկաստանից եկող այն նաւերը, որոնք մտնում են Սև ծովի նաւահանգիստները:

Մեզ հաղորդում են, որ այս տարի թիֆլիսի ընտանական դպրոցից աւարտում են տասն և ութ հոգի հայեր:

Մեզ գրում են հետեւեալը. «Մինչդեռ ամենքը խօսում են քաղաքի մաքրութեան մասին, մինչդեռ ամեն, որ լրագրութիւնը հրաւիրում է քաղաքային մաքրութեան և ոտիկորութեան ուշադրութիւն դարձնելու քաղաքի մի-քանի մասերի մէջ դիպում կեղտոտութիւնների վրա,—ասա ոչ թէ քաղաքի կենտրոնից այդ հեռու անկիւնները չեն մաքրվում, այլ և նոյն իսկ քաղաքի ամենայայտնի տեղերում անգամ մարդ հանդիպում է զղուելի աղտոտութիւնների: Ամսիս 26-ին անցնելով Գլոբոլայա փողոցով, ժամի 11-ին, տեսնում եմ հենց փոխադրայի այգու դրան առաջը մի ստուրտ և մեծ շուն: Ինչ տեսնու տէտը է տալ այս բանին»:

Մեզ խնդրում են տպել, որ շուտով Ս. Պետերբուրգում լոյս կը տեսնի Լեւոպական հոտաներով «Գնարիկ Մանկական» երգարանը, որ պարունա-

կում է իր մէջ 40 հատ ընտիր երգեր, աղօթքներ և պարերգեր, աշխատանքութիւն Ղազարոս քահանայ Գլոբոլայի:

Մեզ գրում են հետեւեալը. «Վաղեկակապա-Րօստովեան երկաթուղու Արմաւիր կայարանում այս օրերս մի զմբաղդութիւն պատահեց. մի կին ընկնելով երկաթուղու գնացքի տակ, գնացքը նրա երկու ոտներն էլ կտրեց տարաւ: Ողորմելին 6 ժամ տանջվելուց յետոյ մեռաւ»:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Կենտրոնական գրաւաճատանոցում, թիֆլիսում, տուացված է պ. Արիկար Արիկարեանի (Հալիպի) նոր վէպը «Ապուլը» վերնագրով: Գինն է 40 կոպէկ: Օտարաբարձարայրի պիտում են այս հուղէտի. В. Тифлисе, в Центральной книжной торговле»:

«Աղբիւր» ամսագրի խմբագիր, պ. Տիգրան Նազարեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Յուլիսի 2-ից մինչև յունիսի 4-ը «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը, այն է երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի օրերը, ի ցոյց ցանկացողներ իր զրոված կը լինի մի խիստ չքեղարուեստ, գեղանկար, գեղագիր աւետարան, որ ամբողջ տարիներ ընթացքում պատրաստել և գրել է Հուշիում տիկին Մարգարիտ Ալեքանան: Իբրև հայ տիկնոջ ձեռքի մի գեղարուեստ և նկարչական գործ, արժէ տեսնել այդ ձեռագիրը, որ իրան տիկնոջ կողմից յանձնված է «Աղբիւր» խմբագրին տնօրէն տանել և նուիրել Ս. Էջմիածնի թանգարանին: Կարելի է տեսնել առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան 8 ժամ»:

Մեզ գրում են հետեւեալը. «Ամսիս 24-ին Ներսիսեան դպրանոցի վեցերորդ—վերջին դաստան աշակերտները հաղորդեցին ինչ հայոց պատմութիւնից: Սարափելի էր անհնել, թէ ինչպէս ասագին աշակերտները դողդոջալով, շշկված, անկապ նախադասութիւններով, կոտրած հայերէն լեզուով պատմում էին դասադան հերթաթիւր, առաւպիներ, երեխայական նաղեր» հայոց պատմութեան անուան տալ: Ով է միջաւորը—ի հարկէ, դասատուն, որի մասին, ինչպէս պատմում են, ձեռնարանի մի տալիքում է: Անկասկած, այդ ուսուցչին տեսնելը ներկայացրել է, իսկ հաղորդութիւնն էլ հաստատել է վեցերորդ դաստան հայոց պատմութեան դասատուի պաշտօնի մէջ»:

Պ. Ալամեան, ընկերակցութեամբ տիկին Զաբէլի, օր. Վարդուհու, պ. պ. Վրդի, Աղայանի, Պարոն-Սարգսեանի և ուրիշների, թիֆլիսից դեպք Վաղեկակապ, այնտեղ ներկայացուցին տալու նպատակով: Վաղեկակապից յետոյ պ. Ալամեան ներկայացուցին է տալու և ուրիշ քաղաքներում:

հաւատացեալների մէջ: Մինք աշխատում ենք խորին կերպով հաւատալ այդ նպատակի ճշգրտութեան: Բայց շատ մեծ սխալումը է այդ նպատակի իրագործումը եղականներին յանձնելը, վասն զի սոքա Գեր. Աղաբեանի հաւատացեալներին չափազանց կը լուսաւորեն և այդ չափազանց լուսաւորութիւնը ձեռնառն չէ ոչ իրեն ոչ իր փողովորեան: Ինչ հարկ դիմել օտարների վերկը, երբ իր ականջի ետեղ, ինչպէս ասում են թիւրքերը, կայ մի հիմնարկութիւն, որ կատարելապէս կարող է գահանել Գեր. Աղաբեանի այդ նախանձելի բազմաբն: Այդ հաստատութիւնը Միսիթարեանց միաբնակութիւնն է, որը ճիշդ է իր իրաւունքը հաղորդելու եղականներին և զանազան լատին կրօնաւորների գործին, թող օգնութեան ձեռն կարկառէ վիճնիայի և Վենետիկի Միսիթարեանց, թող աշխատի համաձայն իրան հետ և նորա ուրախութեամբ յանձն կառնուն բանալ դպրոցներ Հայաստանի դատանքում, ինչպէս այս օրերս բացին Տրապիզոնում: Մենք քաջ գիտենք, որ Միսիթարեանց սահմանաւոր և Վենետիկեանք մասնաւորապէս Գեր. Աղաբեանի կամ զանազան լատին կրօնաւորաց, որելաներին ամեն քահանութեանց հպատակել չեն ցանկանայ և նոքա քիչ աւելի են հակում դէպի աղգային ողւով կրթութեան տարածման, աւելի ինքնակամ, յարատւ և գիտակցաբար գործողներ են, քան թէ Գեր. Աղաբեանին հուսաւորում պրօպագանդայի աշակերտ և այլ աշխարհական քահանայք, հետեւաբար նոքա այն ծա-

Ամսիս 29-ին վրաց «Արար Գաւթի» կոչված «օրան» էր: Առաւօտից սկսած մինչև երեկոյ առաջին լազիկներն, մասնաւոր կանայք, երթեւեկում էին դէպի ս. Գաւթի տանող փողոցներով: Թիֆլիսի հատարակ դասակարգին պատկանող կանայք, որոնք ոչինչ մի օրհնաւոր ուրախութեան և դուարձութեան տեղ չունեն, այդպիսի օրերում ուրախութեամբ դուրս են դալիս դրօսնելու նպատակով, բայց ինչ տեսակ տեսարաններով է շքրջապատված այդպիսի օրերում հասարակութիւնը: Եթէ մենք չունենք թիֆլիսում ցուցահանդէսներ, բայց այդպիսի օրերում թիֆլիսեցին իր աչքի առաջ ունի կոյրերի, կաղերի, անդամաւորչների, մուրացկանների մի ամբողջ ցուցահանդէս... Աւելացրէք զոցա վրա արեւոյդների անաղին խմբերը իրանց հերոսութիւններով, և այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչ տեսարանների է ներկայ լինում բոլոր կանոնաւոր զուարճութիւններից զրկված ամբոխը: Հարկաւոր կանայք, Ս. Գաւթի են գնում աղօթելու և «ողորկ ու զառի-վայր պատերի վրա քարի կտորներ կանգնեցնելու» իրանց բաղին խանալու համար...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԵՈՊՈԼԻ ԲԱՆԿԷ

Հեռագիրը դուժեց արդէն ամբողջ լուսաւորված աշխարհին երեւելի գեղանայից պատմաբան ԼԵՈՊՈԼԻ Բանկէի մահուան մասին, որին հետեւեց խորին ցաւակցութիւն և բուռն համակրութիւն դէպի հանճարեղ-պատմաբանի անմահ յիշատակը: Բանկէ ծնված է 1795 թվ. դեկտեմբերի 21-ին Վիեննայի Բանկէ ստացաւ բարձրագոյն կրթութիւն, և համալսարանից դուրս գալուց յետոյ նշանակվեցաւ Ֆրանկ-ֆուրտ (Օդերի վրա) պրօֆեսոր: Այդ պաշտօնը յանձն առնելուց յետոյ Բանկէ իրան նուիրեց պատմութեան ուսումնասիրութեանը: Մի տասնձեռն ետանդով և ողորութեամբ նուիրելով իր անձը պատմութեան ուսումնասիրութեամբ վերաբերվելու դէպի պատմական աղբիւրները, և անհրաժեշտ էր համարում ճիշտ փրկաւորապէս հայկացեանց որոշումը պատմութեան համար: Բանկէ սկսեց մեծ հռչակ ստանալ իր պատմութիւնից արած դասախօսութիւններով Բերլինի համալսարանում, որտեղ նա պրօֆեսոր նշանակվեցաւ 1825-ին: Երկու տարուց յետոյ Բանկէ սկսեց մի ճանապարհորդութիւն դէպի Վենեցիա, Հռօմ, Ֆլորենցիա և Վիեննա: Այդ ճանապարհորդութիւնը տևեց չորս տարի: 1832—1836 թուականների ընթացքում Բանկէ իր հինամեծ նշանաւոր օրգանում զննադատում էր կառավարութեան զանազան եղանակները: 1841 թ. Բանկէ դաւախուտում էր համալսարանում, զբաղվում էր պատ-

աշխատան հաղանդութեան չին ենթարկուել, որպէս միւսները: Սակայն որ առողջ դատողութիւնը կարող է չարժեք Նորին Սրբութեան «մեծագոյն օգուտը փոքրագոյն չարքի» (?) պատճառաւ ի բաց թողնել: Ունենալով ի նկատի այս դատողութիւնը՝ մենք ի հարկէ չենք կարող մեր անկեղծ համակրութիւնը չը յայտնել այն աշակերտութեան, որ Գեր. Աղաբեան շնորհած է Վիեննայի Միսիթարեանց վերածելով սոցա Կ. Պոլսի վարժարանը մի «Աղգային» աւարժարանի իր հովանաւորութեան ներքեւ, որ ընդունվում են անխափ հայոց դասակներն—ամեն դասանութեան: Այդ վարժարանն այժմ առաջին տեղին ունի Կ. Պոլսում և անդ աւանդվում են միջնակարգ ուսումնարանի բոլոր աւարկաները, ունի նաեւ երկու բարձրագոյն դասատուն, լատիններ, ուր պատրաստվում են համալսարան մտնել ցանկացողներն: Նոյն իսկ Ռուսաստանից լուսաւորչական հայերն ուղարկում են իրենց դասակներն Գ. Աղաբեանի հովանաւորութեան ներքեւ գտնուած Միսիթարեանց Աղգային վարժարանը: Վասն զի միայն Միսիթարեան անունը բաւականի գրաւական է վարժարանի ուղղութեան: Ահա դուրս նման դպրոցներ բանալ տալով Գեր. Աղաբեան անսահման բարիք կարող է անել իր հատարակութեան, իսկ եղականներին աշակերտել—անսահման չարքը ընդհանուր Տաճկո-Հայաստանին:

Բանկէ. Առաքել Սարգսեանց

նոր բնակարաններ և Հայաստանի փողովորեան ներքին վիճակը, անկարելի է անտարբեր աչքով նայել այդ խորամանկ կրօնաւորների գործունէութեան վրա: Սակայն ինչ օգուտ ունի անտարբեր աչքով չը նային և զանազանիլը—երբ մի կողմից նոքա իրենց գործն են տեսնում յայտնի և լուսնային, տարածվում են հայոց դիւղերում, գրաւում են հայոց գաւաղներին, իսկ միւս կողմից հայոց հոգեւորականութիւնը, ճշմարիտ խոստովանած, թէպէտ նոցա հաւատարմութեամբ և նիւթական կարողութիւն չունի, սակայն իր ունեցած միջոցներն էլ շատ անգ կամ չէ ուղւում և կամ չէ հոգ տանում գործանել: Ամեն չարքիլ առաջն առնել հարկաւոր է հենց սկզբից, երբ ախորդուտ հաստատուն արմատ չէ ձգել—ապա թէ ոչ յետոյ որքան օրիւղ դարման տարուի, կամ անօգուտ կը լինի կամ շատ նուազ իճոցնէ: Շատ յարմար է այս առթիւ միտ բերել Գաւթու-Գաւթիայի նշանաւոր «Առաքել Երբ քան անագան» բանաստեղծութիւնը:

Գեր. Աղաբեանի իբրև հետեւող Հաստեան քաղաքականութեան աշխատանք է ինչ միջոցով որ լինի յառաջանել և զօրացնել իր Աթոռը: Սակայն մենք կարծում ենք թէ Հոգեւոր Տէրը (ինչպէս կոչում են հայ-կաթօլիկներն) կաթօլիկութիւնը սխալվում է չարաւար, եղականների օգնութեան մէջ վնասելով իր հաւատացեալների աւելացումը և իր Աթոռի առաջադիւթիւնը: Եղականներն և առհասարակ լատին միաբնակները այնպիսի անձնք են, որ շատ դժուար կարող են հաշտել հայ-կաթօլիկ հոգեւորականութեան հետ: Պէտք է սա կէ-

տը լաւ ըմբռնել, որ նոցա, այդ միաբնակներին զլիւսուոր ջանքն է իրենց սեպհական աղգեցութիւնն առաջ տանել, իրենց մասնաւոր նպատակը դորացնել. նոցա՝ ծրագրել մէջ չէ կարելի փնտռել թէ երբ և ինչ եղականները աշխատեն Գեր. Աղաբեանի Աթոռի բարեաւանման նեցուկ լինել: Ինչքան հեռու է դա՝ Լոյդայի աշակերտները մաքրեց: Բայց մեր հայ-կաթօլիկ հոգեւորականութիւնը միամտաբար վստահանում է դոցա, օգնում է մասնաւոր թէ նոցա ձեռնարկութեանը—և աղգայնով չէ մտածում թէ ինչ փոս է փորում իր առաջ: Կրա հետեւանքն այն կը լինի, որ վաղ թէ ուշ հայ-կաթօլիկաց հոգեւոր գործերի վարչութիւնը՝ աստիճանաբար կանցին լատին կղերի ձեռքը, որին արդէն սկիզբն է տուած արդէն Հաստեանն իր «Մինչև Գարձեալ-ովը» (Ռէվելյուսյոն): Թող հաւատացած լինի Գեր. Աղաբեան, որ ինչքան լատին միաբնակները—մասնաւոր եղականներն զօրանան Հայաստանում, որքան նոքա ընդարձակ առաքելոց գործն իրանց համար հայ-կաթօլիկ եկեղեցուց դաւթում, այնտեղ աղգեցութիւնն աստիճանաբար կը սկսի ցածրանալ: Ուսում թէ այդ և թէ այլ կողմնակի մի քանի պատճառներով, հարկ է մասնաւոր թէ կատարողներն է, որ հայ-կաթօլիկներին Ստեփան Պետրոս Ժ. կաթօլիկոսը ճշ թէ միայն հեռու և զգուշ մնայ եղականներն չաղբից, այլ պէտք է աշխատի նոցա աղգեցութեան տարածմանն էլ հաւակալ ընթացք բռնել: Սակայն Գեր. Աղաբեան ցանկանում է ուղւում և կրթութիւն տարածել իր

երէկ այստեղ տեղի ունեցան ծանր անկարգու-
թիւնները, յարձակվեցան ստիպանութեան վրա
որին օգնութիւն հասաւ զորքը. սպանված են
հինգ հոգի:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԲԱՌՈՒՄ. Ա. Ս. Ուղարկեցինք ձեզ երկու օրի-
նակ «Մշակի» ներկայ համարի:

ԵՐԵՎԱՆ. Բ. Ուղարկեցինք ձեզ ձեր պահան-
ջած երկու օրինակ «Экономическ. положение
Турецких армян» բրոշյուրի:

ՄՈՍԿՎԱ. Մ. Բ. Հասցեատէր, բայց ձեր
բաց նամակը ստիպում ենք անտիպ թողնել:

МОСКВА. М. Предоставьте намъ печатать
объявления какъ мы сами желаемъ. Мы вовсе

не желаемъ подчиняться различнымъ мелоч-
нымъ условиямъ.

С. ПЕТЕРБУРГЪ. Патрову. Мы болѣе не
желаемъ печатать вашихъ объявлений.

ХАРЬКОВЪ. Гостиница Руфа. Объявление
ваше печатается и «Мшакъ» вамъ высылается.

ՄՈՍԿՎԱ. Ե. Ձեր յօդուածը տպվելու է՝ բայց
չառ լաւ կը լինէր եթէ գրէիք մայրաքաղաքի
կեանքի մասին:

ՄՈՍԿՎԱ. Լաւրիկեան. Ձեր յօդուածը չառ լաւ
էր և անմիջապէս տպեցինք: Ձեր երկրորդ յօդուածը
այնքան չը հաւանեցինք: Եթէ տպիլ էլ, տմարդ-
ջովիւնամբ չի տպիլ:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐԱՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ, բարձրագոյն հաստատած քաղաքային կա-
նոնադրութեան 17 և 22 յօդ. և այս տարուայ մայիսի 5-ին կայացած քաղաքային դու-
մայի որոշման համաձայն, հրաւիրում է պ.պ. տանտէրներին, որոնք յանձնառում են մաս-
նակցել քաղաքային առաջիկայ 1887—1890 թ. չորսամեակի ընդհանուր ընտրութիւն-
ներին, ներկայացնել անմիջապէս քաղաքային գանձարանին մինչև այս տարուայ մայիսի
31-ը իրանց կալուածքներին վերայ մնացած գնահատութեան հարկի ապառիկները: Քա-
ղաքային վարչութիւնը սրանով յայտարարում է, թէ այն անձինք, որոնք նշանակեալ ժա-
մանակահատիցներ լիովին չեն ներկայացնել իրենց վրա մնացած ապառիկները, ընտրողա-
կան ցուցակներէն դուրս կը գցուին:

(120) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընդհանուր
թեան, թէ քաղաքային դուման, ի նկատի ունենալով առաջիկայ 1887—1890 չորսա-
մեակի քաղաքային ընդհանուր ընտրութիւնները, 1886 թ. մայիսի 5-ի նիստում որոշեց:

1) Կազմել և վերջացնել ընտրողական ցուցակներ մինչև ներկայ տարուայ օգոս-
տոսի 1-ը:

2) Ընդհանուր և անբաժան կալուածքում մասն ունեցողներին առաջարկել յայտ-
նելու վարչութեանը մինչև Յուլիսի 1-ը ընդհանուր կալուածքում իրանց մասն ունե-
նալու մասին, ցույց տալով իրանց պատկանելի բաժինը: Յայտարարութիւնը ներկայա-
ցնելուն պէս վարչութիւնը հաւաքած հարկը հաւաստարկէ կը բաժանէ, կալուածա-
տէրերին մէջ, եթէ յայտնի է նրանց թիւը:

3) Ընտրողների հաւատարմատարները և անչափահաս ընտրողներին խնամակարները
պէտք է ներկայացնեն եթ օր ընտրութիւններից առաջ քաղաքացիներին առաջինները
սահմանած պրոշյուրով թղթի վրա գրած իրանց հաւատարմութիւնը (շրջաբ. Ե. Գ.
Մինիստ. 1876 թ. Նոյեմբերի 26-ից, № 10,766), հաստատած նոտարի ձեռքով, եթէ
նրանց յանձնողների ստորագրութիւնները ծանօթ չեն վարչութեանը, իսկ վերջինները
խնամակարական հաստատութիւնների հրամանները, որով նրանք նշանակուած են խնա-
մակարութեան կողմից մէջ: Ինչպէս հաւատարմատարներին, նոյնպէս և խնամակարներին
գրել ընտրութեան ցուցակներում մի համարի տակ իրանց յանձնողներին և խնամակա-
րողներին հետ, իսկ ընտրողական ժողովի նիստի օրը այդ անձանց անունները կախել
նիստի դահլիճում:

4) Վարչութեան կողմից պատրաստած ընտրողական ցուցակները, յայտնել ի գի-
տութիւն ընդհանուրութեան Սեպտեմբերի 4-ին, իբրեւ յաւելում տեղական լրագիրներին,
ուղարկել նրանց քաղաքի ստորագրողներին և ցուցակները հանդէս հանել դումայի
դահլիճում:

5) Ընտրողական ցուցակներում եղած անկանոնաւորութեան դէմ քաղաքի ընտելի-
ների կողմից արած նկատողութիւնները, ընդունել քաղաքային վարչութեան մէջ բացա-
ռապէս Սեպտեմբերի 7-ից մինչև 21 և նրանից յետոյ ցուցակները ներկայացնել դումա-
յի հաստատութեանը: Քաղաքային վարչութիւնը պատիւ ունի յայտարարելու այս գը-
րուածները, որպէս զի այն անձինք, որոնք ընտրութեան ժամանակ ձայն ունեն, իր ժա-
մանակին ուղարկին քաղաքային վարչութեանը այդ մասին իրանց նկատողութիւնները:

(121) 1—3

ՎԻԷՆՆԱ

Ա. Չ. Գ

ԳՐԵԹԷ ՈՉԵՈՈՎ

ԱՆՍՏՐԻԱ

Կարելի է առնել սեղանի զեղեցիկ ԱՆՕԹՆԵՐ, 42 կտոր, միայն 18 Ֆրանկ 75 սանտ
Առևտրի դադարման պատճառով, ծախու համար են ՀԱՆՖԷՆՆԱՆ արծաթէ
պատրաստած անօթներու ահագին քանակութիւններ, սովորական գնէն 25 առ 100
զեղով: Արտադրութիւն են Հալֆենեան արծաթեղէններ պատրաստող Միացեալ Բնի-
րութեանց, որք անանկացած են այժմ:

Միայն 18 Ֆրանկով և 75 սանտիմով ստանալի, ինչ որ յաւաքագոյն 60 Ֆրանկով
կը ստացվէր: Կը գրկենք Հալֆենեան արծաթէ պատրաստեալ սեղանի հետեւեալ անօթ-
ներն, որք արտաքոյ կարելի ընտիր և դիմացկուն են:

6	հատաւորական զեղեցիկ գանակներ	Հալֆենեան արծաթէ
6	պատառաքաղներ	"
6	սպուրի մեծ գրաշներ	"
6	սուրճի սիրուն գրաշներ	"
1	սպուրի խոշոր և ծանր դրաշ	"
1	կաթի մեծ գրաշ, շատ նուրբ	"
3	հաւկիթի զեղեցիկ և թանձր անօթներ	"
2	սկաւառակներ թէյամանի համար	"
1	թէյի զեղեցիկ թորիչ	"
1	զեղեցիկ պղպեղաման, կամ չաքարաման	"
3	չաքարի շքեղ թասեր	"
6	զեղեցիկ դանակակաշներ	Բիւրեղէ

Սպիտակութիւն երաշխաւորեալ 10 տարի:

Ընդունելու համար այս 42 անօթներն Ֆրանկ 4 և ուղղակի ընտկարանը, 4 կամ
5 օրվայ մէջ, հարկ է ուղարկել 18 Ֆրանկ 75 սանտիմ ընդհանուր միջերանոցը Հալ-
ֆենեան արծաթեղէններու Միացեալ գործարանաց, այս հասցեով

M. RUNDBAKIN 2 B. Hedwiggasse
VIENNE (Autriche)

ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Դրամը կը հատուցվի երբ վաճառքներն չը յարմարին: Հայերէն
լեզուաւ նամակներ կընդունվին:

7—18 (Շ)

Дозволено цензурою, Тифлисъ 30 Мая 1886 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍՊՈՐՏԱՆ ԵՄԱԿԱՆՍՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Հինգշաբթի 12-ին յունիսի ԲԱՌՈՒՄԻՑ դուրս կը գնայ TIGRE (ՏԻԳՐ) շոգենաւը,
նաւապետ BONNEFOY (ԲՕՆԵՖՅՈՒՎ) մանկով Կ. Պօլիս և Զմիւռնիա և յարակցելով
Եւֆրատ, Պօրտ-Սէյիդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ԲԱՌՈՒՄ և ԲԱԳՈՒՄ պ. պ. ԷԼԼԷՐՍ ԲՈՒՐ-
ԿԼԱՐԻՒՆ և ԸՆԿ. Իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԻՐԳ ԷՆՁՈՒՐԵԱՆ ԷՆՁՈՒՐԵԱՆՅԻՆ: 1—3

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:

- 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григо-
рія Арзруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.
- 2) Die Oekonomische lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von
Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.
- 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni,
übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп.
почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

8—25

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵԼԵԿՐԱԳՐԻ Վաճառականական դասակարգին պատկանող
իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ԶԵՆՆԱՐԿ առևտրական հաշուարարու-
թիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ԶԵՆՆԱՐԿ ԱՌԵՏԻՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է Կիւտ. գրալաւաւանոցում, եղբարց Գօլիանօվների բանկային
դրամենեալում և հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11: Օտարա-
քաղաքացիք դիմում են վերջին հասցեով՝ Ս. Ս. Մանուէլյանց:

Գինն է ամեն տեղ 2 ռուբլի:

23—30

ԹՈՑԻՏՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԵԿԵԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլեկտր-Меланге.
Մարդերի արագ և
առատ բուսաց-
նելու համար և
նրանց պահպանե-
լու թափվելուց: Գի-
նը 2 ռ. սրտակի
համար, գործածու-
թեան հրահանգի
հետ միասին, առ-
սերէն, ֆրանսերէն
և գերմաներէն լե-
զուով:



Բաղադր—Eu-
genie. Գալիսեա
և պակի փունջի
ծաղիկներից, Է-
րկանի, շիճքին և
ձուրերին քնք-
շտութիւն և փափ-
կութիւն, նոյն-
պէս և մարմարի-
նի սպիտակու-
թիւն տալու հա-
մար, շուշանի և
վարդի անուշա-

հատութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը սնչացնելու: Գինը 1 ռ. 75 կ. սրտա-
կի համար, գործածութեան հրահանգով առսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմիրաղեղ—Eugenie. Տեղուկ, թուշերին և սկանջներին ընկան վարդի գոյն տալու, որ չէ
փակվում էլէկտրական լուսատարութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտիքից: Առաջարկ-
վում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ռ. 50 կ. սրտակի համար, գործա-
ծութեան հրահանգով առսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կամէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պա-
ռնակում իրանց մէջ որ և է զնաատար նիւթեր:

Բէրթա Րիս.

ԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱԾ ՊՈՍՏԱՐ

Իսկական «Pasta Eugenie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատա
հող ուրիշ անարդիւր երեւոյթների դէմ: Հալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և
զեղեցիկութիւն: Գինը մի սրտակի համար 1 ռ. 60 կ.

Քիւնին-գլխեղէրիւնեան պոմադ պերուական բաղադրից, մազերը պնդացնելու, խտացնելու և մե-
ծացնելու համար: Գ. 2 ռ. սրտակի համար:

Ձուրերի պոմադ: Գինը սրտակի համար 1 ռ. 30 կ.: Իւրաքանչիւր սրտակի վրա գտնվում է
պաշտպանողական գրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի վրձինով 1 ռ. 50 կ.,
առանց վրձինի 1 ռ. 20 կ.

Մազերի ներկը երկը գոյնի. Իս. շաքանակաւոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ռ. ներկը «Բիս-
Կաւումանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիգորյանի ղեկավարման ապրանքների մագազի-
նում, «Էմպոն» հիւրանոցի տակ, Զուրաբովի տանը:

41—100

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ

Յանձն է աւանդ թարգմանել ֆրանսերէ-
նից, գերմաներէնից և անգլիերէնից մատչելի
դներով: Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

28—100

ԿՕՔԻ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ս. 4907)

13—50 (2)

ՅՐԱՆՍՊՈՐՏԱՆ ԵՄԱԿԱՆՍՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Չորեքշաբթի, յունիսի 11-ին, «ԱՐՄԵՆԻԱ» (ARMENIE) շոգենաւը, նաւապետ
ՇԵՍԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պօլիս և Մարսէյլ: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնի և Թիֆլիսում պ. Բէնօնի, նախկին Արժ-
րունու գաղլերէնում, № 103.

2—4